ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 22 » դեկտեմբերի 2016 թ. N 13 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԻՋԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 13-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել, որ

1) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար (այսուհետ՝ նախարար) Իգնատի Առաքելյանը համակարգում է.

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի իրավաբանական վարչության, ներքին աուդիտի բաժնի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի, <<Լիցենզավորման կենտրոն>> գործակալության, գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության, Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի, <<Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի, նախարարության կառավարման ոլորտում գործող սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատանքները.

2) նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը համակարգում է.

ա. նախարարության քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության, ագրովերամշակման զարգացման վարչության, գյուղատնտեսական կոոպերացիային աջակցության բաժնի, գիտական և գյուղատնտեսության աջակցության կենտրոնների համակարգման բաժնի միջոցով,

բ. նախարարության համակարգի <<Ագրոսպասարկում>>, <<Արմավիրի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>>, <<Արարատի

գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>>, <<Արագածոտնի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>>, <<Շիրակի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>>, <<Լոռու գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>>, <<Տավուշի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>>, <<Գեղարքունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>>, <<Վայոց Ձորի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>>, <<Սյունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>>, <<Կոտայքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>>, <<Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

3) նախարարի տեղակալ Արմեն Հարությունյանը համակարգում է.

ա. նախարարության քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության և գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչության միջոցով,

բ. միջազգային համագործակցությունը և Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությամբ պայմանավորված նախարարությանը վերապահված աշխատանքները.

4) նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանը համակարգում է.

ա. նախարարության քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության, բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության, հողերի օգտագործման և մելիորացիայի վարչության, անտառային տնտեսության բաժնի և սննդամթերքի անվտանգության բաժնի միջոցով,

բ. նախարարության համակարգի <<Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն>>, <<Հայանտառ>>, <<Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն>>, <<Սերմերի գործակալություն>>, <<Ագրոքիմիական ծառայություն>>, <<Երկրագործության գիտական կենտրոն>>, <<Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների և <<Գյումրիի սելեկցիոն կայան>>, <<Տեխնիկական մշակաբույսերի փորձարարական կայան>> փակ բաժնետիրական ընկերության, <<Հայկական միրգ>> բաց բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը,

5) նախարարության աշխատակազմի ղեկավար Արտաշես Կիրակոսյանը համակարգում է.

ա. նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության, քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնի, տնտեսական բաժնի, առաջին բաժնի և զորահավաքային բաժնի աշխատանքները,

բ. իրականացնում է <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով, որոշմամբ և այլ իրավական ակտերով նախարարության աշխատակազմի ղեկավարին վերապահված լիազորություններ:

2. Նախարարի բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ, նախարարի պարտականությունները կատարում է նախարարի տեղակալներից մեկը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2014 թվականի փետրվարի 3-ի <<Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի, նախարարի տեղակալների և աշխատակազմի ղեկավարի միջև աշխատանքների բաշխման և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի նոյեմբերի 5-ի N 194-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 13-Ա հրամանը:

ՆԱԽԱՐԱՐ՝

Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ